ՏՆՏԵՍԱԿԱՆ, ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅ-ԼԱՏՎԻԱԿԱՆ ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Տնտեսական, արդյունաբերական, գիտական և տեխնիկական համագործակցության հարցերով հայ-լատվիական միջկառավարական հանձնաժողովը հիմնվել է համաձայն 2009թ. դեկտեմբերի 10-ին «Հայաստանի Հանրապետության կառավարության և Լատվիայի կառավարության միջև տնտեսական, արդյունաբերական, գիտական և տեխնիկական համագործակցության մասին» համաձայնագրի:

Հանձնաժողովի հայկական կողմի նախագահն է ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալը: Հայ-լատվիական միջկառավարական համատեղ հանձնաժողովի առաջին նիստը կայացել է 2013թ. հունիսի 28-ին Ռիգայում: Հանձնաժողովի հերթական երկրորդ նիստը նախատեսվում է անցկացնել Երևանում: